

Ապաքեն են աստ մեզ՝ և քանի Գլորիոզ ք*) Կառուցեալք ի Հայրենասիրաց Հնդկահայոց ոմանց, որպէս և հանգանակեալ գումարն ընդ նուիրելոցն ի մէջ ծառային յայն պէտս, այլ համեմատելով ընդ ծախեալ գումարս բողոքականաց ոչինչ լինի վասն որոյ պէտք են բաւականին դրամոց, զի միացեալ ընդ վերոյիշեալ գումարսն՝ հաստատեցի օրինաւոր և հաստատուն ուսումնարան բարձրագոյն ուսմանց և լեզուադիտութեանց ի դիմադրութիւն թշնամեացն, և այսր հոգացողութեան սպասիմք ի Աւհիդ տնօրէնութենէ:

Ծրարեցաք ի սմին զմի օրինակս ի Յայտարարականէն մերմէ և զցուցակս հանգանակեալ գումարաց յանուն նոյն առաջագրեալ Ազգային ուսումնարանին ի գիտութիւն Աւհիպառութեան 2երոյ, զոր ապա խնդրեմք յանձնել Խմբագրութեան Արարատ պատուական Ամնագրոյ սրբոյ էջմիածնի՝ և հրամայել նոցա հրատարակել յէջս այնր Ամնագրոյ ի տեղեկութիւն Ազգայնոց և ի քաջաբութիւն նուիրողաց այնց գումարաց, զոչ լիցուք:

Յայտարարութիւնը և ցուցակը ի յաջորդ թերթին կ'հրատարակեմք:

ՅՈՒՑԱԿ ՆՈՒՐԱՏՈՒԱՅ Ի ՆՊԱՍՏ

ՎԵՐԱՀԻՆՈՒԹԵԱՆ ԱՅԲԵՑԵԱԼ ՄԱՍԻՆ

ՃԵՄԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ:

(Ն-Բ-Ն-Ի-Ն-Ի-Ն):

ՅԵԿԱՏԵՐԻՆՈՒՊԱՐ:

2եռամի Գէորգ քահանայի Մէլիքեանց . . . 1.

Ժողովեցաւ ի շրջակայից քաղաքին 100

Յարութիւն Ա. քահանայ Վարդանեանց 5

Մինաս Ա. քահանայ Բարեանց	3
Գէորգ քահանայ Մէլիքեանց	3
Սրապիտն Ա. Սարկաւագ Պրտօփօթեանց	2
Աւսուցիչ Պ. Նիկողայոսեան Գալֆայեանց	2
Գէորգ Արզումանեանց	15
Մինաս Միլլաշեան Բախիքեանց	20
Աւետիք Իւանդիլեանց	15
Լուսպարոն Խլեպիկեանց	10
Նիկողայոս Ընդօգլայեանց	5
Սարգիս Զախարեանց	3
Վաղարոս Պէրէլեանց	5
Մանուկ Սէպալաքեանց	15
Խաչերես Խաչիկեանց	2
Խոսա Ուղունեանց	2
Յարութիւն Պապարսուքեանց	2
Բաղդասարեանց և Թառաւեանց	5
Գասպար Միլեքեանց	1
Սարգիս Գասպարեանց	1
Եղբարք Պապարսուքեանք	10
Գարրիէլ Թորոսեանց	5
Նիկողայոս Թամացեանց	10
Միքայէլ Եպիֆանեանց	3
ՓԵՕԺՐԷ ԱԼԵՔՏԵՆԻՇ ԼՈՒՇՆԻԿՈՎԷ	1
Խաչատուր Խարաբիլեանց	15
Գէորգ Ռաֆայէլեան Պաշմաքեանց	1
Օդսնետ Պախլիսարայեանց	3
Յակովբ Նիսիանաճեանց	3
Գարրիէլ Պօղազեանց	3
Գէորգ Խոչեանց	5
Կարապետ Օրձիկեանց	3
Գասպար Ոսկերչեանց	1
Պետրոս Եւանդուլեանց	20
(Ի յԵ-Բ-Ն-Ի-Ն-Ի-Ն)	

Պ. ՍՏԵՓԱՆՆՈՍ ԽԱԶՆԱՏԱՐԵԱՆՑ ԵՒ

Տ. ՀՈՒԹՈՒՄԻՍԷ Յ. ԽԱԼԻՊԵԱՆ

Ի ԶԱԼԹԸՐ:

ԽՈՒՄԵՐՆԵԱՆ ԱՐԱՐԱՏ ԸՏՈՒՄԵՐՈՅ:

Տարակոյս չկայ, որ ոչ սակաւ խնդութիւն պիտի պատճառէ համազգեաց սրտից հետեւեալ բարեգործութիւնը շին—Խը—

(*) Յաւակի է որ նոյն դպրոցները միացնելով՝ մի նշանաւոր գումար գլխացնել եւ աւելի նշանաւոր եւ ըստ առարկայիցն ճոխ օւսումնարան կազմել աւելի օգտաւէտ լինելով, սակայն բարերաց միաբանութիւնն չէ յաջողած եւ ցարդ ամենն եւս ցրուած վիճակի մէջ մնացած են: Սոցա մէջ նշանաւոր տեղ ունի եւ կարող է առաւել արգելաւոր լինել չարիկի կաթ ունի հիմնած դպրոցն:

Կյուսասմբ որ Գեր. Առաջնորդն ի Հնդկաստան անձամբ կ'յաջողի մի համաձայնութիւն գլխացնել եւ դպրոցները գոնէ երկու մասի վերածելով՝ բարեյոյս կարգադրութիւն անել:

ընդհանուր համայնական Պ. Ստեփաննոս Խաղնազարեանցի և իւր ամուսնոյ տիկին Հռիփսիմեայ, զոր և ես մեծաւ ուրախութեամբ սրտի փութամ հաղորդել ամսագրոյդ իլուր բարեսիրաց:

Գիւղիս Հոգեւոր Ծխական դպրոցը 1867 ամէ հետէ՝ այս ինքն յօրէ բացմանն պաշտելի հրամանաւ Ազգասէր և ուսումնաճառաւ Հայրապետի մերոյ Սրբազնասուրբ Ստեփաննոսի ամենայն Հայոց՝ Տ. Տ. Գեորգիոյ Գիւղիսի շարունակելով ցայսօր անվթար մատակարարել ուսումնաւորական կրթութիւն և զհրահանգս Աստուածապաշտութեան ըստ ամենայնի համաձայն բարենպաստակ ուղղութեան Սուրբ կամաց՝ Կորին Աստուածընտիր Սահակաբանութեան՝ ցանկալի իմն և զգալի միանգամայն հարկ տեսանիւր ընդարձակել՝ դպրոցի շինուածքը ըստ պահանջման թուոյ և պիտոյից աշակերտացն: Այլ քանզի առաջագրեալ դպրոցի շինուածքը ոչ սակաւ դրամական գումարի պէտք ունէր, վասն որոյ և զառաջինն վհատել ինչ թուեցաւ մեզ գէթ առ սակաւիկ մի, բայց որովհետեւ վերնախնամ Տեսչութեան ամենակարող աջակցութիւնը միշտ և հանապազ զուգընթաց է այսպիսի աստուածահաճոյ ենթադրութեանց և ձեռնարկութեանց, իբրեւ ուղղիչ և առաջնորդ, ուստի ոչ ի՞նչ գայր վհատելն, որպէս և եղեն իսկ: Ըստ որում իվեր այսր յիշատակեալ Ունիւարդոյ Պ. Ստեփաննոս Խաղնազարեանց գովելի իմն հոգեւորութեամբ իւր բարեջան տիկին Հռիփսիմէ Զարութիւնեան Խաղիպեան ամուսինովը հանդերձ՝ ամե-

նաջերմեռանդ կերպով լիցուցին այս պիտոյքը, այն է նուիրեցին մշտնջենապէս ի սեփհականութիւն Ազգեղեցւոյ և յօգուտ նորոգ կառուցանելի դպրոցին մերոյ ընդարձակադիր տեղ մը գիւղիս մէջ, որով թեթեւաբեռնեցին նոքա գիւղիս հասարակութեան ջանակուռ հոգացողութիւնը այս մասին:

Այս երկոքին սիրակցորդ զոյգս աճեալ բարգաւաճեալ լինելով ազգի ազգի առաջինազարդ բարեգործութեամբ, ապաքէն և իրաւամբք և արդիամբք արժանացեալ թէ համազգի և թէ օտարաց իրաւուն շնորհակալութեան և սիրալիր համակրութեան, — երբէք չեն զլացեր և արդ չզլանան միութարեւ և սփովել զչքաւորս և զկարօտեալս՝ յարաժամ առիթս որոնելով և յօժարամիտ զանձինս իւրեանց առայդ ընծայելով, ինչպէս օրինակ իմն, սոքա բաց ի յիշեալ ընծայիցն՝ ամենայն սիրով յանձնառու եղեն իւրեանց սեպհականութեամբը հոգալ դպրոցիս մէկ քանի չքաւոր աշակերտաց պիտոյքը թէ գրենեօք և թէ հանդերձեղինօք: — Այնպէս սոքանուիրած են մշտնջենաւորապէս գիւղիս Ազգեղեցւոյ իսեփհականութիւն և ի պէտս՝ իւրեանց անշարժ կայքը գիւղիս մէջ և անոնց եկամուտքը զինի մահուան իւրեանց: Ան սոցա և այլ տեսակ բարեգործութիւնք, զորս մանրապատում լեալ իզրի առնելն աստէն՝ թողում այլումն առաւել բարեպատեհ նուագի: Իսկ այժմ աւարտ տալով համառօտագիծ նամակիս՝ խոնարհաբար խնդրեմ խմբագրութիւնէդ, մի բացասել տեղի տալ այս նամակիս իմում՝ յանկանց լուսաշաւիղ ամսագրոյդ Արարատոյ յուրախութիւն բարե-

